



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիոյան

«25» 02 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0012-22

Ձեռնարկողը՝

«ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊԸ
Ք Երևան, Մամիկոնյանց փողոց 42,44

Գործունեությունը՝

Արևիկի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի
հանքավայրի արդյունահանման աշխատանքների
շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
Արմավիրի մարզի Արևիկ համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ավագի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի պաշարները 1735.0հազ.խմ՝ որից ըստ կատեգորիաների՝ A-501.0 հազ.խմ, B-834.0 հազ.խմ, C1-400.0 հազ.խմ:

Հայցվող տեղամասի կորդինատներն են ARM WGS-84 համակարգով՝

1. X=8424899.043, Y=4439965.818
2. X=8424767.474, Y=4440002.497
3. X=8424481.993, Y=4440055.511
4. X=8424455.378, Y=4440041.241
5. X=8424409.417, Y=4439982.412
6. X=8424302.326, Y=4439961.049
7. X=8424260.979, Y=4439886.603
8. X=8424258.988, Y=4439745.468
9. X=8424305.336, Y=4439696.104
10. X=8424319.371, Y=4439689.091
11. X=8424520.389, Y=4439692.096
12. X=8424586.425, Y=4439669.832

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝ առավելագույն երկարությունը 430.0մ, առավելագույն լայնությունը 380.0մ, մշակման միջին խորությունը 3.0մ, որից՝ 2,55մ օգտակար հանածո, 0,43մ մակաբացման շերտ: Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 18327.0խմ ակգխ-ի մարվող զանգված: Հաշվի առնելով նախագծային կորուստները՝ մոտ 6.65% կամ տարեկան 1202.4խմ, բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ ակգխ-ի արդյունահանվող զանգվածի կկազմի՝ 17125.0խմ: Նախատեսվում է բացահանքում լեռնային աշխատանքները կատարել շուրջ տարվա աշխատանքային ռեժիմով: Աշխատանքային օրերի թիվը տարվա մեջ ընդունվում է 260 օր, օրական մեկ 8-ժամյա աշխատանքային հերթափոխով: Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի: Սույն նախագծով նախատեսվում է հանքավայրի շահագործումը իրականացնել բաց լեռնային աշխատանքներով:

Օգտակար հաստաշերտի արդյունահանման ժամանակ նախագծային կորուստները որոշված են ըստ երկու խմբերի՝ 1-ին ընդհանուր բացահանքային կորուստներ՝ դրանք այն կորուստներն են, որոնք մնում են բացահանքի կողերի շեպերի բնամասերում: Այդ կորուստները կազմում են 16860.0խմ կամ 4.6%, 2-րդ շահագործողական կորուստներ՝ այդ կորուստները պայմանավորված են օգտակար հանածոն մակաբացման ապարների աղտոտումից զերծ պահելու համար մակաբացման ապարների հետ մոտ 5մ օգտակար հանածոյի շերտը հեռացնելու հետ, այդ կորուստները կազմում են 7187.0խմ կամ 2.05%: Ընդամենը նախագծային կորուստները կազմում են 24047.0խմ (տարեկան 1202.4խմ) կամ 6.65%:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է բացահանքի արտադրական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով ավտոճանապարհների և արտադրական հրապարակի ջրման համար: Խմելու ջուր բերվում է կցովի ջրի ցիստեռնով: Տեխնիկական ջուրը մատակարարվում է ջրցան լվացող ավտոմեքենայով:

Արդյունահանման աշխատանքների ընթացքում արտաքին լցակույտի անհրաժեշտություն չկա, քանի որ շահագործման առաջին տարում առաջացած մակաբացման ապարները



տեղադրվելու են հայցվող տարածքի (բացահանքի) միջնամասում փաստացի առկա խոռոչներում, որոնք արդեն իսկ հագեցած են ջրով: Իսկ շահագործման 2-րդ տարուց և հետագա շահագործման ընթացքում մակաբացման ապարները տեղադրվում են ադրեն իսկ մշակված տարածքներում՝ խոնավ հատվածներում, իրականացնելով ներքին լցակույտաառաջացում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսակետից դա շատ նպաստավոր է, քանի որ հավելյալ տարածքներ խախտելու անհրաժեշտություն չի առաջանա:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազար դրամ:

Ուսումնասիրվող տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում: Բնության հատուկ պահպանվող տարածքներից ուսումնասիրվող տարածքին ամենամոտ գտնվողը «Որդան կարմիր» պետական արգելավայրն է: Հանքավայրի տեղամասը գտնվում է արգելավայրից 20կմ հեռավորության վրա: Հանքավայրի և հանքավայրի հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

Բացահանքի աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- Փոշիացումը նվազեցնելու նպատակով տարվա չոր և շոգ եղանակին կատարել ջրցանումը՝ օրը 5 անգամ,
- բացահանքում աշխատող տեխնիկայի շարժիչների վառուցքները պետք է լինեն կարգավորված՝ անսարք մեքենաների շահագործումը բացահանքում պետք է արգելվի,
- մեքենաների շարժիչների գազերի արտանետման վրա պետք է տեղադրված լինեն կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումը մթնոլորտ,
- թափոնները պարբերաբար դուրս բերել բացահանքի տարածքից և տեղադրել հատուկ նախատեսված հարթակներում,
- արգելվում է հրապարակից դուրս խախտել լրացուցիչ տարածքներ, տեղադրել թափոններ և այլն,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցները վարել բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, անհրաժեշտության դեպքում բարելավել այն,
- արտադրական հրապարակներում, հանքախորշերում, ճանապարհներին և այլ արտադրական տեղամասերում, հատկապես չոր եղանակին, մշտապես կիրառել ջրցան մեքենաներ փոշենստեցման համար,
- տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում,
- հնարավորինս արագ վերակազմել խախտված հողաբուսաշերտը, եթե այդպիսին առկա է,
- կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին,
- կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխման ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:



- անհրաժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որոշման դրույթների վրա:

Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին չորս անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ դրանց պահպանման համար նախատեսված տեղից դեպի հավաքող փոսը ուղղությամբ, ամենօրյա զննում:

Պատճառաբանական մաս. Արմավիրի մարզի Արևիկի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, կադաստրի կոմիտեն: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացմանը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական



և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊԸ կողմից ներկայացված Արմավիրի մարզի Արևիկի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ գլխավոր մասնագետ՝



Վ. Հարությունյան